

Էջ 02

### Յօդուած

Յատուկ «Չարթունք»-ին Սփիռքի Կոմիտէի Հիմնադրման Արձագանգները Արտասիրողորային Սփիռքում

Էջ 03

### Սուրիահայ Օրագիր

Սուրիոյ Հոգեւոր Առաջնորդներու Հանդիպում Անթիլիասի Մայրավանքէն Ներս

Էջ 04

### Մարզական

Ճոքովիլը եւ Ռիլիլը մը Յաւակնորդներ

## Լիբանանեան Լուրեր

# Նասրալլա Չի Աճապարեր Նախագահ Ընտրելու Գծով

### Տեանկին Տիւմա Ռուսէ՛ք Օրինակ Երիտասարդութեան



Վերի նկարին մէջ երեւոյցը Տիւմա Ռուսէ՛քն է... 23 ամեայ պարզիցի աղջիկը, պուկարիայէն Պրագիլ գաղթած հօրմէ... նկարը առնուած է պրագիլական գիտութեան դատարանին մէջ իր դատավարութեան ընթացքին... թուականը՝ 1970...: Նկարին մէջ երեւոյցը դատարանէն իրենց ամօթէն երեսնին ծածկած են՝ լսելով այն աներեւակայելի չարքարանքներուն մասին, որ երիտասարդուհին կրած է ոստիկանութեան մօտ իր հարցաքննութեան եւ յետոյ փոխադրուած բանտին մէջ...:

Այդ տարիներուն գիտութեաններու ձեռքը ինկած Պրագիլին մասին աշխարհը շատ բան չէր գիտեր՝ բացի անոր ֆուրբոլէն ու ֆուրբոլի թագաւոր պրագիցի Փելէն...:

Պրագիլ յարթեց Իտալիոյ... Փելէն Մուսիկայի յարթանակի բաժանը բարձրացուց... Նոյն օրերուն Տիւմա Ռուսէ՛ք բանտարկուեցաւ երէք տարուան համար՝ գիտութեան բանտարկական կարգերով պետութեան դէմ ըմբատութեան մեղադրանքով...:

Այսպէս է բնատիրութիւնը... որուն տիրապետութեան տակ իւրաքանչիւր ազատ անձ կը մտահոգէ բնատիրը ու կը սպառնայ անոր անօրէն գոյութեան...: Տիւմա Ռուսէ՛ք Պրագիլի Նախագահուհին է այսօր: Ան իր նախորդին՝ Տի Սիլվիային քայլերուն հետեւելով, Պրագիլը ֆուրբոլային երկրէ մը վերածեց՝ ամէն մարգերէ ներս տնտեսապէս հզօր պետութեան...:

Փելէն ատենին ժամանակաւոր ուրախութիւն պարգեւեց աղքատ պրագիլցիներու սիրտերուն... սակայն ցաշտեցաւ հաց ապահովել անոնց...:

Տիւմա բանտարկուեցաւ, չարքարանքի եւ բնադատութեան ընթացքին... աղքատներուն կեանքը բարելաւելու իր պայքարի ընթացքին...:

Շնորհի այդ քաջ կնոջ, այսօր անոնցմէ շատեր անգործ, հացի կարօտ ու անօթի չեն այլեւս...:

Այսօր՝ լիբանանցի տղաք ու աղջիկներ շատ բան ունին սորվելիք Տիւմա Ռուսէ՛քէն...: Հայաստանի երիտասարդութիւնն ալ...:

ՍԵՆԿ ԶԿՎՈՐԵՆՆ

## Շրջանային Լուրեր

# Սուրիոյ Տագնապի Լուծման Ծուրջ Ժընեւի Բանակցութիւնները Սկսան

ՄԱԿի հովանիի ներքոյ երկն յետմիջօրէին ժընեւի մէջ մեկնարկեց սուրիական բանակցութիւններու 3-րդ փուլը: Սուրիական վարչակարգի պատուիրակութիւնը կը գլխաւորէ արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուալլեմ, մինչ ընդդիմութեան մասնակիցները տակաւին չեն յստակացած: Նախապէս ՄԱԿի Սուրիոյ հարցերով յատուկ բանագլխաց Սթեֆան ՏԷ Միսթուրա հաստատած էր, որ Սուրիոյ հարցով բանակցութիւնները պիտի

Էջ 02



Հրգպալլայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլա երկէ երեկոյեան հեռափոխուած էլոյթ մը ունեցաւ, ուր շեշտեց, որ իր կուսակցութիւնը կը զօրակցի Միշէ Աունի թեկնածութեան, միեւնոյն ժամանակ օրինելով Ֆրանսիոյ թեկնածութիւնը: Ան հաստատեց, որ Աուն մինչեւ այն ատեն, որ թեկնածու է, կը մնայ իրենց թեկնածուն:

Իր խօսքին մէջ Նասրալլա գանազան սպքներ ուղղեց 14 Մարտի ուժերուն կողմը, գանոնք ամբաստանելով, որ իրենց ղեկավարութեամբ եւ լրատուական միջոցներով կը բնական ճեղք բանալ Հրգպալլայի եւ Ազգային Ազատ Հոսանքի միջեւ: Նասրալլա ըսաւ, թէ մինչեւ այն ատեն, որ քաղաքական հասկացողութիւն չկայ Նախագահի անուկն շուրջ, դժուար պիտի ըլլայ խորհրդարանին մէջ օրինական նիստ մը կայացնել Նախագահ ընտրելու: Հիմնուելով այս իրականութեան վրայ, ան կոչ ուղղեց չաճապարել ու աշխատիլ քաղաքական համաձայնութիւն մը գոյացնելու բոլոր կողմերուն միջեւ:

### Հրգպալլայի Ի Նպաստ Դրամ Լուսնոց Երկու Լիբանանցիներ Ամերիկեան Պատժամիջոցներու Ցանկին Վրայ

Ամերիկեան գանձարանի քարտուղարութիւնը երկու լիբանանցիներ տեղադրեց պատժամիջոցներու ցանկին վրայ՝ Հրգպալլայի Ի Նպաստ Դրամ լուսնոյ յանցանքով: Քարտուղարութեան համաձայն Մուսա մմէտ Նուրուտին եւ Համիդ Չահրուտին աշխատած են Պեյրութի մէջ հաստատուած Trade Point International ընկերութեան միջոցաւ, փոխանցելու համար Հրգպալլայի յատկացուած գումարներ: Քարտուղարութիւնը հաղորդագրութեան մը մէջ շեշտեց, որ Նուրուտին գործածած է հաղորդակիցներու մեծ ցանց մը՝ դրամներու լուսնոյն համար, ապա գումարները ուղարկած է սեւ շուկայի մէջ գնումներ կատարելու՝ Հրգպալլայի անդամ քանի մը յաճախորդներու ի նպաստ:

### 14 Մարտի Երիտասարդական Կազմակերպութիւնները Կը Պահանջեն Չինուորական Ատեանը Վերացնել

14 Մարտի քաղաքական ուժերու երիտասարդական կազմակերպութիւնները հաստատեցին, որ կը շարունակեն Չինուորական ատեանի որոշումները տապալելու փորձերը, պահանջելով վերացնել Չինուորական ատեանի եւ փոխարինել հաստատել քաղաքական պարագաներու ատեաններ: Երիտասարդական կազմակերպութիւնները բողոքի հաւաք մը կազմակերպեցին Սայտայի մէջ, որ մաս կը կազմէր լիբանանեան գանազան շրջաններու մէջ տեղի ունեցած բողոքի նման օրինակ շարժումներուն: Անոնք դատապարտեցին ոճրագործ Միշէ Ամէիայի ազատ արձակման որոշումը եւ պահանջեցին անոր թղթածրարը փոխանցել Դատական խորհուրդին: Երիտասարդները դրական

որակեցին Չինուորական խորհուրդի նշանակումներուն ամբողջացումը, սակայն կոչ ուղղեցին նմանօրինակ յանձնարարներու ձեռնարկել:

### Ժամաժ Քաղաքապետական Ընտրութիւններու Կայացումը Բոլոր Կողմերուն Պատասխանատուութիւնը Կը Նկատ

Լիբանանեան Ռւժեր կուսակցութեան պետ Սամիր Ժամաժ յայտարարեց, որ բոլոր տոնելները կը նշեն, թէ գլխաւոր երկու կուսակցութիւններ կը պատրաստուին խոչընդոտելու քաղաքապետական ընտրութիւնները: Ժամաժ վտանգաւոր որակեց այս փորձը եւ նշեց, որ այդպիսով լիբանանցի պիտի կորսնցնէ իր վստահութիւնը պետութեան հանդէպ: Լիբանանեան Ռւժեր կուսակցութեան Նախագահը նաեւ «Թուիթթըր» վրայ կատարած գրառումներու մէջ նշեց, որ կառավարութեան անդամ բոլոր կողմերը պատասխանատու են՝ քաղաքապետական ընտրութիւններու գծով անհրաժեշտ որոշումները առնելու, այլապէս պիտի կրնն ընտրութիւններու յետագումով պատասխանատուութիւնը:

### Ամաստ Հարիի Իսկոյն Նոր Նախագահ Ընտրելու Կոչ Ուղղեց

Սուրթաքալ Հոսանքի ընդհանուր քարտուղար Ամաստ Հարիի յայտարարեց, որ իրենց կը փորձեն վերջ տալ դատարկութեան, որպէսզի կացութիւնը չհասնի անդունդի եւ լիբանանցիները չհրաժարին հանրապետութենէն: Ամաստ Հարիի կը ներկայացնէր նախկին վարչապետ Սաստ Հարիիին, Սըլեյ շրջանին մէջ կայացած հանդիպութեան մը ընթացքին: Խօսելով Նախագահական ընտրութիւններուն մասին, ընդհանուր քարտուղարը խորհրդարանական բոլոր պլոքներուն եւ երեսփոխաններուն կոչ ուղղեց՝ իսկոյն ուղղուելու խորհրդարան եւ ընտրելու հանրապետութեան Նոր Նախագահը: Անոր համաձայն որեւէ խմբաւորում չունի Նախագահական ընտրութիւնը պոյքոյթի ենթարկելու որդապատժաներ: Ան նաեւ շեշտեց, որ ազգային համագորակցութիւնը կը համարուի գերագոյն կարեւորութեան արժէք մը եւ կը դատուի ամէն բանէ վեր:

### Վարչապետ Սալամ Ընդունեց Երրօրական Միութեան Ցանձակատար Եռանէ Հանը

Վարչապետ Թամմաթ Սալամ վարչապետարանին մէջ ընդունեց Երրօրական Միութեան Հարեանութեան եւ ընդարձակման քաղաքականութեան յանձնակատար Եռանէ Հանը, որուն հետ խորհրդակցեցաւ: Լոնտոնի մէջ Հիմնադրութիւն օր կայանալիք՝ Սուրիոյ գաղթականներուն օգնութիւններ տրամադրելու աշխատանքին նուիրուած ընտրութիւնները: Հան տեսակցութենէն ետք յայտարարեց, որ դրուատած է Սալամի եւ Լիբանանի կառավարութեան աշխատանքը՝ փաստականներուն տրամադրուած հոգատարութեան առումով եւ շեշտած, որ քաղաքական մարմինը կը կատարէ իր ամբողջական աշխատանքը:

## Սինա Ինկած Ռուսական Օդանաւի Մէջ Պայթուցիկի Զեւեղման Գծով Կասկածելիներ Զերբակալուած

«Ռոյթթըր» լրատու գործակալութեան աղբիւրներու տուեալներով, եգիպտական իշխանութիւնները կը կասկածին, որ պայթումի պատճառով Սինայի անապատը ինկած ռուսական օդանաւին մէջ ռուսաց զինուորական օդանաւային ընկերութեան թեթիւք պաշտօնեան, որ պայթուցիկ սարքը ստացած էր Իսլամական պետութեան՝ Տաէի անդամ իր գարմիկէն: Վերջինը Սուրիոյ մէջ զինուորագրուած է ահաբեկիչներու շարքերը: «Անոր թելադրած էին ոչ մէկ հարց տալ եւ ռուսաց օդանաւ բերել», յայտնած է աղբիւրը: Կը նշուի, որ յանցագործը ունեցած է յանցակից՝ օդանաւակայանի ուղեբեռային ծառայութեան աշխատակիցը: Բացի այդ աղբիւրներ կը յայտնեն, որ ահաբեկչութեան աշակերտ են նաեւ Երկու ոստիկաններ, որոնք աչք փակած են օդանաւին մէջ կասկածելի անցուղարձի վրայ: Բացառուած չէ, որ անոնք պարզապէս անբարեխղճութիւն դրսեւորած են: Կը յայտնուի, որ չորս կասկածելիներն ալ ձերբակալուած են:

## Հայրենի Լուրեր

# Նախագահ Սարգսեան Մասնակցեցաւ Պաշտպանական Ազգային Հետազոտական Համալսարանի Բացման Արարողութեան

ՀՀ Նախագահ, գիտնական ուժերու գե-րագոյն գլխաւոր հրամանատար Սերժ Սարգսեան երկէ մասնակցեցաւ Երեւանի մէջ ՀՀ Պաշտպանական Նախարարութեան (ՊՆ) Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի բացման հանդիսաւոր արարողութեան, որուն ներկայ եղան նաեւ ՀՀ եւ ԼՂՀ պաշտպանութեան նախարարները, ՀՀ գիտնական ուժերու բարձրագոյն ղեկավարկազմը, գերատեսչութիւններու ղեկավարներ, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ հաւատարմագրուած ղեսպաններ, օտարերկրեայ բարձրաստիճան հիւրեր, գիտութեան եւ կրթութեան ոլորտի ներկայացուցիչներ:

ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութեան փոխանցմամբ՝ հանրապետութեան Նախագահի շրջեցաւ համալսարանի նորակառոյց մասնաշէնքին մէջ, ծանօթացաւ հաստատութեան ծրագիրներուն, համալսարանի գործունեութեան համար ստեղծուած պայմաններուն, ինչպէս՝ հետազոտական-կրթական նպատակներու ծառայող աշխատանքներու հետադարձութիւններուն, որմէ ետք ներկայ գտնուեցաւ համալսարանի բացման նուիրուած հանդիսաւոր նիստին:

ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայեանի անունաւ Ազգային ռազմավարական հետազոտութիւններու հիմնարկի պետ, գորավար-գնդապետ, քաղաքական գիտութիւններու դոկտոր, փրոֆէսոր Հայկ Զոթանջեանի զեկույցէն ետք,



# Իրաքի Վարչապետը Կարեւոր Համարած Է Հայ Համայնքին Դերը Երկրի Զարգացման Մէջ

Եզրափակիչ արձանագրութեան ստորագրութեամբ Յունուար 27-ին Պաղտատ՝ Հայ-իրաքեան միջկառավարական յանձնաժողովի հերթական նիստը: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ արտաքին գործոց նախարարութեան մամուլի, տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապի վարչութիւնը:

Իրաք այցելութեան ընթացքին հայ-իրաքեան միջկառավարական յանձնաժողովի հայկական կողմի համանախագահ Արմէն Երիցեան, Յունուար 27-ին հանդիպում ունեցաւ Իրաքի վարչապետ Հայտար Ապատիի հետ: Հանդիպման ընթացքին վերջինիս փոխանցուած էին ՀՀ Նախագահի եւ վարչապետի ողջունները, ինչպէս նաեւ Հայաստանի կառավարութեան աշակերտներու ահաբեկչութեան ղեկավարներու վերաբերեալ: Արմէն Երիցեան յայտնած է ՀՀ իշխանութիւններուն պատրաստակամութիւնը՝ Իրաքի հետ բոլոր ոլորտներուն մէջ յարաբերութիւնները ամրապնդելու եւ ընդլայնելու վերաբերեալ ու ներկայացուցած է առկալ դրական յառաջընթացի բարձր չափերը պահպանելու անհրաժեշտութիւնը:

Հանդիպման ընթացքին Իրաքի վարչապետը նշած է, որ քարիւղի գիներու անկման պատճառով կառավարութիւնը յատուկ ուշադրութիւն կը դարձնէ, նոր ոլորտներու մէջ օտարերկրեայ գործընկերներու հետ համագործակցութեան զարգացման՝ այս առումով կարեւոր տեղ յատկացնելով Հայաստանին: Վարչապետը իր քաջատեղեկութիւնը ցուցադրած է իրաքեայութեան խնդիրներուն վերաբերեալ եւ յատուկ նշած է հայ համայնքի դրական դերակատարութիւնը երկրի զարգացման գործին մէջ:



նիստին ողջոյնի խօսքով հանդէս եկած են՝ ԱՄՆ պաշտպանական ազգային համալսարանի Տուայտ Դ. Այզընհաուզի անունաւ ազգային անվտանգութեան եւ հնարաւորութիւններու կառավարման ռազմավարութեան դպրոցի փրոֆէսոր Ընյամ Բիգը, Հարվըրտի համալսարանի ճոն Ֆ. Զենետիի անունաւ պետութեան հետազոտութիւններու դպրոցի ազգային անվտանգութեան ծրագիրի տնօրէն, գորավար-հարիւրապետ, փրոֆէսոր Թետ Օլսթրեմը, Ռուսիոյ Դաշնութեան արտաքին գործոց նախարարութեան Մոսկուայի միջազգային յարաբերութիւններու պետական հիմնարկի (համալսարանի) Եւրասիական անվտանգութեան կեդրոնի տնօրէն, քաղաքական գիտութիւններու դոկտոր, փրոֆէսոր Ալեքսանդր Լիքիթիլը:

Համալսարանի գիտաժողովներու դաւիժմին մէջ տեղի ունեցաւ նաեւ պարգեւատրման հանդիսաւոր արարողութիւն: ՀՀ Նախագահի հրամանագիրներով, ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի հիմնարկման գործին մէջ ունեցած անսկիւր համար Ընյամ Բիգը, Թետ Օլսթրեմը, Ալեքսանդր Լիքիթիլը եւ Հուսթանական անվտանգութեան մասին պայմանագրի կազմակերպութեան գլխաւոր քարտուղար, ՀԱՊԿ գիտափորձագիտական խորհուրդի նախագահ, գորավար-գնդապետ Նիքոլայ Պորոխիման պարգեւատրուեցան Երախտագիտութեան մետալով:



Հայտար Ապատին յայտարարած է, որ Իրաքի կառավարութիւնը ուշադրութիւն կը դարձնէ ազգային ու կրօնական փոքրամասնութիւններու խնդիրներուն եւ անոնց արտագաղթը կանխելու նպատակով կը ձգտի ստեղծել նպաստաւոր կենսական պայմաններ:

Հանդիպման ասարտին վարչապետ Ապատին իր ջերմ ողջունները փոխանցած է ՀՀ Նախագահին, լուսնոյն մաղթանքները յղելով Հայաստանի ժողովուրդին:

Նոյն օրը Արմէն Երիցեան հանդիպում մը ունեցած է նաեւ Իրաքի անտառային նախարար Մուսա մմէտ Ծաւ ալ Սուտանիի եւ Երթեւեկութեան նախարար Պաքիր Ծապ ալ Չուպայիտիի հետ:

Անտառային նախարարը իրապիած է հայկական ընկերութիւնները օգտուելու Իրաքի մէջ ստեղծուած հնարաւորութիւններէն, մասնակցելու Պաղտատի միջազգային ցուցահանդէսին, ինչպէս նաեւ նախարարութեան կողմէ յայտարարող յայտարարումներ:

Երթեւեկութեան նախարարին հետ ընկերուած են Պաղտատ-Երեւան ուղի չուերթի հետ կապուած հարցերը, ինչպէս նաեւ Իրանի միջոցով ցամաքային բեռնափոխադրումներ իրականացնելու խնդիրները:



# Յատուկ «Չարթօսք»ին Սփիռքի Կոմիտեի Հիմնադրման Արձագանգները Արտախորհրդային Սփիռքում

**ԳԵՐԳ ԵԱՉԸՏԵԱՆ**

Այլապես, կրնայ պատահիլ որ մարդոց եւ քաղաքական շրջանակներու մօտ ստեղծուի այն համոզումը, թե՛ այս Կոմիտեն ալ համայնավար փրոփակականային համար ստեղծուած մէկ մարմին է, սփիռքահայութեան մօտ իրենց նպատակաւոր ազդեցութեան գօտիներ ստեղծելու աշխատող, եւ ահա արդէն կը ձախողի այս կոմիտեն եւ իրեն նման կազմակերպութիւնները: Սաղըրեանը «մասնաւորաբար» շեշտում է այս կէտը, «քանի անկեղծօրէն կը փափաքինք որ տոյն կոմիտեն գործունէութիւնը ըլլայ յաջող, արդիւնատուր, եւ արտասահմանի Հայութիւնը ամուր կապերով կապէ իր Մայր Հայրենիքին, առանց որուն անիմաստ կը դառնան արտասահմանի մէջ տարած ամեն ձեւի ազգայնական ման ճիգերը»: Հեղինակն առաջարկում է փոխարքաբերութիւնները կառուցել «սիրոյ, վստահութեան եւ Հայութեան միութեան զգացումներով», այլապէս՝ հայութեան հատուածների միջեւ կարող են ստեղծուի «վերապահութեան, եւ նոյնիսկ թշնամանքի զգացումներ, որոնցմէ կը տուժԹ Հայութիւնը, իր ամբողջութեան մէջ»[34]:

Այս երեք «անկկալութիւնները»ներկ այսցնելուց յետոյ, Յ. Սաղըրեանը մի անգամ եւս ուղջունում է Սփիռքի կոմիտեի ստեղծումը, յաջողութիւն մարդում նրա աշխատանքներին եւ յոյս յայտնում, որ Կոմիտեի պատասխանատուները պարբերաբար կ'այցելեն գաղթօճախ-

ներ՝ տեղում ծանօթանալու համար նրանց խնդիրներին[35]:

Կոմիտեի հիմնումը տրամազծօրէն տարբեր արձագանգ է գտել արտախորհրդային սոցիալիստական երկրներում լոյս տեսնող հայկական ընդամենը երկու պարբերականներում՝ Պոլիարեստի «Նոր կեանք» եւ Սոֆիայի «Երեւան» շաբաթաթերթերում: Մինչեւ 1964 թ. աւարտը, «Լուրեր Հայաստանէն» մշտական սիւնակ ունեցող «Նոր կեանքում» լոյս է տեսել Սփիռքի կոմիտեի անունը իշատուութիւն եւ ոչ մէկ ուղջոյի խօսք կամ խմբագրական ու յօդուած այս մեծ իրադարձութեան մասին, ինչը վկայում է Կոմիտեի նկատմամբ խմբագրութեան ծայր աստիճան անտարբեր մօտեցման մասին: Առաջին հրատարակումը հէնց հիմնումի լուրն է, որը թերթի Սեպտեմբերի 11-ի համարում տրուել է լակոնական տեսքով՝ կարծես ի միջի այլոց. «Վերջերս Երեւանի մէջ կազմակերպուած է Սփիռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտե»[36]: Այսքանը միայն. ընդամենը 10 բառ, որից հինգը՝ կառոյցի անունն է: Եւ սա այն դէպքում, երբ խմբագրութիւնը հաստատուած ստացած կը լինէր - թէկու՞ «Սովետական Հայաստան» օրաթերթի միջոցով - ՀՀԳ տարածած պաշտօնական տեղեկատուութիւնը, որտեղ մի հատուած յատկացուել է մինչեւ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուել՝ Ռումինիայի եւ Պոլսի արհիպիսկոպիտի առաջնորդ գործած Վազգէն Պալճեանի ելոյթից Կոմիտեի հիմնադիր հաւաքում:

Եւ 6 Նոյեմբերի համարներում, որոնք հակիրճ լուրեր են համապատասխանաբար սփիռքահայ ուսուցիչներին ի պատիւ «Ամենիս» հիւրանոցում Կոմիտեի եւ ՀԽՍՀ լուսաւորութեան նախարարութեան համատեղ տուած բարի երթի ցերեկոյթի եւ բանաստեղծուի Զարուհի Գալմեքեարեանի 90-ամեակին նուիրուած երեկոյթի մասին:

Ռումինիայոց միակ պարբերականի՝ «Նոր կեանքի» այս յոյժ զգուշաւոր վերաբերմունքը կարելի է բացատրել Ռումինիայի եւ ԽՍՀ Մղեկավարութիւնների միջեւ գրեթէ մշտապէս առկայ լարուած յարաբերութիւններով: Ի տարբերութիւն «Նոր կեանքի», Սոֆիայի «Երեւան» շաբաթաթերթը, թե՛ն Կոմիտեի ստեղծումից մեկուկէս ամիս ետք, ջերմօրէն ուղջունեց նրա ստեղծումը[37]: Թերթը արտատպեց նաեւ Վարդգէս Համազասպեանի «Հայրենիքի եւ Սփիռքի սերտ կապերի համար» վերաբարած թերթի ընտելագումով՝ «ուշագրավ յօդուած»ը, որը լոյս էր տեսել «Սովետական Հայաստան» պետական-կուսակցական պաշտօնաթերթում[38]:

Վսմիփելով վերեւ գրուածները փաստում ենք, որ Սփիռքի կոմիտեի ստեղծումը ամենատարբեր արձագանգներգտաւ սփիռքահայ պարբերական մամուլում՝ անկախ դրաներկայացուցիչների կուսակցական պատկանելութիւնից կամ համակրութիւնից: Դա բացատրում է Կոմիտեի ստեղծումից յետոյ առաջին շաբաթների թոյլ տեղեկացումութեամբ, ինչպէս նաեւ խորհրդային իշխանութիւնների քայլերի նկատմամբ սփիռքահայ բոլոր շրջանակների - բացի իհարկէ կոմունիստներից - անաղաբար վերապահ, սպասողական, զգուշաւոր-դիրքորոշումով: Այդուհանդերձ, նոյն շրջանակները եւ խորհրդային Հայաստանի մտաւորականութիւնը Կոմիտեի ստեղծումը գնահատեցին իբրեւ «ոսկէ Նոր կամուրջ» Հայրենիքի եւ Սփիռքի միջեւ:

[37] «Երեւան», Ի. տարի, թիւ 33 (1283), 14 Օգոստոսի 1964 թ., էջ 3:  
[38] «Հայրենիքի եւ Սփիռքի սերտ կապերի համար», «Սովետական Հայաստան»օրթ., Երեւան, թիւ 255 (13293), 29 Հոկտեմբերի 1964 թ., էջ 3: «Երեւան», Ի. տարի, թիւ 46(1296), 13Նոյեմբերի 1964 թ., էջ 1:

*Շար. 5 եւ վերջ*

# Յատուկ «Չարթօսք»ին Յատուկ Հոգանոցներ Լիբանանի ... Ինչո՞ւ

**ԱԼԵՔՍ ԱՇՇԵԱՆ**

Մի քանի ընտանիքներով բարեկամի մը տունը հաւաքուած էինք: Յանկարծ, ըստ սովորութեան ելեկտրականութեան հոսանքը ընդհատուեցաւ: «Ըստ սովորութեան», որովհետեւ որպէս լիբանանցիներ վարծ ենք սման երեւոյթներու: Իսկ «յանկարծ», որովհետեւ սովորական ընդհատումի ժամերէն դուրս ընդհատուեցաւ ելեկտրականութիւնը: Հինգ վայրկեան մութի մէջ նստելէ ետք տան-

տեր բարեկամ մտներ վառեց եւ սենեակը լուսաւորեց: Հարցուցի՝ «իշթիրաք» չունի՞ք : Ըսաւ՝ մեր թաղը երկու տարբեր զիծեր ունի. թթէ անոնցմէ միայն մէկը ընդհատուի, «իշթիրաք»ը ելեկտրականութիւնը չի միացներ: Օօօօօ, ըսաւ ուրիշ բարեկամ մը, կը յիշեմ 90ական թուականներուն էր, Էլի Հըպէյքա որպէս ուժանիւթի նախարար, խորհրդարանին մէջ խօսք առաւ եւ ըսաւ՝ «Եթէ ինձի \$ 32,000,000 ապահովէք, վեց ամիսներ ետք 24/24 վրայ ելեկտրականութիւն կրնամ ապահովել»: Ի՛նչ \$ 32,000,000ներ

վատուեցան, աւելցուց ուրիշ մը, եւ տակաւին մութի մէջ կը խարխափեմք: Եթէ մեր պատասխանատուներուն երեսներուն թքեցք, անձրեւ կու գայ կ'ըսեն, ընդմիջեց տիկին մը: Բարեկամ մեր քաղաքագետները 24 ժամ անձրեւի տակ կը պտըտին, որովհետեւ այնքան իրենց երեսներուն թքողներ ունին: Ատոր համար յատուկ հովանոցներ պէտք է ապսպորուի իրենց համար, որպէսզի յորդառատ անձրեւներուն կարողանան դիմանալ: Խեղճերուն վրաները միշտ թաց է:

**Շրջանային Լուրեր**

Էջ 01 ►►

## Սուրիոյ Տազնապի Լուծման Ծուրջ Ժընեւի Բանակցութիւնները Սկսան

Կայանան 29 Յունուարին, կոչ ուղղելով սուրիացի ժողովուրդին օգուագործելու այս պատշաճ առիթը՝ իր ձայնը լսելի դարձնելու աշխարհին, բանակցութիւններուն մասնակից իր ներկայացուցիչներուն միջոցաւ, անոնք ըլլան Սուրիայէն թէ արտերկրէն: Սակայն Սուրիոյ ընդդիմութեան բանակցու-

թիւններու խորհուրդի բանբեր Մուսզեր Մախոս յայտարարած էր, որ իրենց պիտի մասնակցին բանակցութիւններուն, մինչեւ որ չիրականանան իրենց կողմէ ՄԱԿի ներկայացուցած մարդասիրական շաբք մը պահանջները՝ հակառակ Ուաշինկթընի տընաշան կոչերուն, որ այս առիթը նկատեց պատմական:

Մինչ այդ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը անգամ մը եւս հաստատեց իր բացարձակ մերժումը՝ ժեյշ ալ Իսլամ եւ Աիրար ալ Ծամ կազմակերպութիւններու մասնակցութեան ժընեւի բանակցութիւններուն:

**Միջազգային Լուրեր**

## Չիկա Ժահրի Դէպքեր Յայտնաբերուած են ԱՄՆի Եւ Հարաւային Ամերիկայի Ու Եւրոպայի Մէջ

ԱՄՆի նախագահ Պարաք Օպամա կոչ ուղղեց հրատապ միջոցառումներ ձեռնարկել եւ Չիկա ժահրի չի ձայնը լսելի դարձնելու նկատի առնելով, որ երկիրին մէջ աւելցած է Չիկա ժահրով վարակուած մարդոց թիւը՝ հասնելով 6-ի: Վարակման 4 դէպքեր արձանագրուած են Նիւ Եորք նահանգի մէջ՝ 2-ը ստորգ Նիւ Եորք քաղաքի մէջ: Վարակման պարագաներ կան նաեւ Աքրանգաու ու Վիրժինիա նահանգներու մէջ: Վերջերս յայտարարուած էր Շուէտի եւ Արժանթինի մէջ Չիկայով վարակման պարս-

զաներու յայտնաբերման մասին: Գերմանիոյ մէջ ալ արձանագրուած են Չիկա ժահրով վարակուելու 2 դէպքեր: Նշենք, որ այս ժահրը սկսած է տարածուիլ նաեւ Հարաւային եւ Կեդրոնական Ամերիկայի մէջ, որ վտանգաւոր էլաւտակապէս յոյ կանանց համար: Գերմանիոյ մէջ Չիկա ժահրը յայտնաբերուած է անցեալ Դեկտեմբերին՝ Հիպիթեի վերադարձած զբօսաշրջիկներու մօտ: Ընդհանուր առմամբ Չիկա յայտնաբերուած է եւրոպական 7 երկիրներու մէջ՝ բացի Գերմանիայէն Չուիցերիոյ, Դան-իոյ, Մեծ Բրիտանիոյ, Փորթուկալի, Հոլանտայի

եւ Շուէտի մէջ: Բոլոր պարագաներուն մօտ ալ հիւանդները վարակուած են Լատինական Ամերիկա ուղեւորութիւններու ժամանակ: Միջատներու միջոցով տարածուող այս ժահրով վարակման ամենաշատ պարագաւոր տարածագրուած են Պրագիի մէջ, ուր Ապրիլ 2015էն մինչեւ օրս արդէն արձանագրուած են այս տեսիղ կէս միլիոն վարակումներ: Գոլումբիոյ մէջ կը հաղորդուի մօտ 16.500 պարագաներու մասին: Նիքարակուայի կառավարութիւնը եւս յայտնեց Չիկա ժահրով վարակուելու 2 դէպքերու մասին:



**Պատմութեան Մէջ Այսօր**

**Եղիշէ Չարենցի Տուն-Թանգարան**

Մեր թուականէն 41 տարիներ առաջ՝ 1975-ին բացուած է 20-րդ դարու հայ անուանի բանաստեղծ Եղիշէ Չարենցի

տուն-թանգարանը, Երեւանի այն բնակավայրին մէջ, ուր 1935-1937 թուականներուն բանաստեղծը ապրած է:

1987ին՝ Չարենցի ծննդեան 90ամեայ հոբելեանին առիթով, շէնքը ենթարկուած է մասնակի փոփոխութիւններու եւ Հայաստանի կառավարութեան որոշմամբ թանգարանի տարածքը ընդլայնած:

Չարենցի տուն-թանգարանին մէջ հաւաքուած են բանաստեղծ Չարենցի

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

**Սուրիոյ հայ հոգեւոր համայնքապետերը, 29 Յունուար 2016-ի առաւօտուն, Անթիլիասի Մարտավանքին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ հանդիպում ունենալէ ետք, հրապարակեցին հետեւեալ հաղորդագրութիւնը:**

Այսօր, 29 Յունուար 2016, Սուրիոյ հայ երեք համայնքներու հոգեւոր պետերս, Անթիլիասի Մարտավանքին մէջ խորհրդակցական հանդիպում մը ունեցանք Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ: Հանդիպման ընթացքին ըննարկուեցան Միջին Արեւելքի, մասնաւորաբար Սուրիոյ մէջ տիրող իրավիճակը եւ ներկայացուեցաւ սուրիահայութեան տագնապը, որ դժբախտաբար կը շարունակուի նոյն տարողութեամբ: Զննարկման առարկայ եղաւ վերջին հինգ տարիներուն տարուած միասնական աշխատանքը՝ մեր ժողովուրդին մարդասիրական օժանդակութիւն եւ հոգեւոր ու ազգային իմաստով նեցուկ կանգնիլը:

Սուրիոյ հայ երեք համայնքապետերս Վեհափառ Հայրապետին յայտնեցինք մեր երախտագիտութիւնը՝ իր հայրական ցուցմունքներուն, մասնաւորաբար Սուրիահայ Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմինին ճամբով համահայկական օժանդակութիւններ պահովելու եւ Անթիլիասի մէջ հաստատուած յատուկ հիմնադրամի ճամբով անցնող տարիներուն մեզի փոխանցուած նիւթական օժանդակութեանց համար: Այս առիթով մեր գնահատանքը կը յայտնենք Հայաստանի պետութեան, ինչպէս նաեւ Հայաստանի ու Սփիռքի բոլոր հոգեւոր կեդրոններուն, ազգային թէ համայնքային կառոյցներուն եւ անհատներուն, որոնք տագնապի ամբողջ տեսողութեան նիւթաբարոյական զօրակցութիւն ցուցաբերեցին մեր ժողովուրդին:

Այս հանդիպումին վերահաստատեցինք մեր միասնական համայնք ըլլալու իրողութիւնը, որովհետեւ միասնաբար գործեցինք՝ մեր հետ ունենալով համայնքային բոլոր կառոյցները եւ պիտի շարունակենք նոյն ոգիով մեր կարելին ի գործ դնել՝ յօգուտ մեր համայնքի տագնապահար զաւակներուն:

Արդ, Վեհափառ Հայրապետին ցուցմունքներով, եւ միասնաբար վերականգնումի յոյսով, մեր հաւաքական ճիգը պիտի ըլլայ նոյն ոգիով ու վճռակամութեամբ ծառայել սուրիահայ մեր ժողովուրդին:

Կո՛չ՝ կ'ուղղենք սուրիահայ մեր ժողովուրդի զաւակներուն, որպէս լիիրաւ սուրիացի քաղաքացիներ, հաւատարիմ մնալու ասանջական Սուրիոյ, աննկուն կամքով շարունակելու մեր հաւաքական երթը՝ մարդելով, որ խաղաղութիւնը շուտով վերահաստատուի, իսկ մեր ժողովուրդը վերադառնայ եւ վերականգնէ իր հոգեւոր ու ազգային ժառանգութիւնը:

**ՇԱՀԱՆ ԱՐԷ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
**ՍՈՒՋՆՈՐԻ ՀԱՅՏՆ ԲԵՐԻՍՏ ԹԵՒՆԻՆ**

**ՊԵՏՐՈՍ ԱՐԷ. ՄԻՐՈՒԹԵԱՆ**  
**ՍՈՒՋՆՈՐԻ ԿԱԹՈՂԻԿ ԳՅՅՈՅ**

**ՎԵՐՊ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԵՆԻՍԵԱՆ**  
**ՀԱՄԱՅՆՔԱԳԵՑ ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԵՒՆ**

# Յատուկ «Չարթօսք»ին Քաղաքական Անկիւն Պատմական Այցելութիւն Մը

**ԳԵՐԳ ԶԵՕՇԿԵՐԵԱՆ**

Երեքշաբթի, 26 Յունուար 2016-ին, Իրանի նախագահ Հասան Ռուհանի այցելեց Սրբազան Զահանայապետ Ֆրանսիս Պապին, Վատիկանի իր նստավայրին մէջ: 17 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով էր, որ Իրանի նախագահ մը կ'այցելէր Վատիկան եւ տեսակցութիւն կ'ունենար Պապին հետ: Անոնց հանդիպումը տեւեց 40 վայրկեան եւ կեդրոնացաւ միջկրօնական խօսակցութեանց կարեւորութեան վրայ:

որոնք կը ձգտին իրանի հանդէպ ցարդ արմատացած բացասական մտապատկերը (image) մասամբ բարեփոխելու, դժբախտաբար արձանագրեցին նաեւ արեւմտեան բարքերուն խորթ երեւոյթներ: Հիմա թոյլ տուէք բացատրեն:

Նախ եւ առաջ, երբ նախագահ Ռուհանի պետական շրջանակներէ ներս կ'ընդունուէր, ան կը խուսափէր իգական սեռի պատկանող բարձրաստիճան պաշտօնատարներուն ձեռքերը թօթուելէ: Ան կը բարականանար պարզապէս գլխու նշանով մը բարեւելով զիրենց:

Արդարեւ վերջին անգամ Նախագահ Խաթամին էր, որ 1999-ին այցելած էր Յովհաննէս-Պօղոս II Պապին: Իսկ միակ Սրբազան Զահանայապետը որ այցելած է Իրանի Պօղոս VI-րդն էր, որ 1970-ին գացած էր Թեհրան: Գիտե՞ք անշուշտ, որ այն ժամանակ Իրանը կայսրութիւն էր, Շահ Ռըզա Պահլաւիի իշխանութեան ներքոյ:

Երկրորդ, երբ նախագահ Ռուհանի կ'այցելէր Հոմա քաղաքի պատասխան թանգարանը, թանգարանի պատասխանատու պաշտօնէները նախապէս փայտեայ վանդակներով ծածկած էին բոլոր մեզի արձանները, որպէսզի անոր զգացումները չփրիարորուին:

Նախագահ Ռուհանի Իտալիա եւ ապա Ֆրանսա կը գտնուէր՝ վերանորոգելու Իրանի հետ առեւտրական կապերը, որոնք խզուած էին՝ երբ միջազգային տնտեսական պատժամիջոցներու ենթարկուեցաւ Իրան, կորիզային վառելանիւթի պատրաստութեամբ ամբաստանուելով: Արեւմտեան պետութիւնները կը խորհէին, թէ այս մէկը նախաքայլն էր հիւլէական զէնքերու արտադրութեան, որ կրնար խախտել աշխարհի խաղաղութեան ձգտող իրենց ջանքերը:

Մենք գիտնենք, որ իսլամական կրօնը ստեղծուած է 7րդ դարուն, իսկ այժմ մենք կ'ապրինք 21րդ դարու մէջ: Ուրեմն որքան ճիշդ է, որ եօթերորդ դարուն ստեղծուած կրօնքի մը սովորութիւնները տակաւին կիրարկուին քսանմէկերորդ դարուն:

Հոս պէտք է աւելցնել, որ երկու շաբաթ առաջ միջազգային տնտեսական պատժամիջոցները վերացան, երբ Իրան հինգ մեծ պետութիւններու հետ՝ միջուկային զէնքերու արտադրութիւնը կասեցնելու համաձայնագիր ստորագրեց Վիեննայի մէջ:

Թերես մենք իրաւունք չունինք դատապարտելու իսլամները, եթէ անոնք շարունակեն կիրարկել կրօնական իրենց հնադարեան սովորութիւնները իրենց երկիրներուն մէջ: Սակայն երբ անոնք իրենց երկրէն դուրս գան, պէտք է ենթարկուին այդ երկիրներու կարգ ու կանոնին, չէ՞ք խորհիր:

Նախագահ Ռուհանի Իտալիոյ մէջ կազմ առաքման պայմանագիր մը ստորագրեց, իսկ Ֆրանսայի մէջ Փեժօ (Peugeot) ինքնաշարժ ներածելու պայմանագիր մը ստորագրելէ գատ, յանձնառու եղաւ 127 Երպաս (Airbus) տեսակի օդանաւեր գնելու: Այս բոլորին լայնօրէն արձագանգ հանդիսացան Թեհրանի պետական մամուլը:

When in Rome, do like the Romans do (Երբ Հոմմի մէջ ես, ըղբ այնպէս ինչպէս հռոմէացիները կ'ընեն), կ'ընէ նշանաւոր ասացուածքը:

Ամենայնդէպս կը խորհիմ, որ եթէ մերի արձանները կը վիրաւորեն նախագահ Ռուհանիի զգացումները, ան պէտք չէ այցելէ Հոմմի քաղաքանները եւ վերջ: Իսկ գալով իգական սեռի պատկանող պետական անձնաւորութեանց ձեռքերը թօթուելուն, այդ երեւոյթը պէտք է վերագրել՝ Յակոբ Պարոնեանի «նրբացուցիչ դէպք յանցանաց» բացատրութեան եւ այսպէսով վերջացընել միջազգային քաղաքական այս կճու ակնարկը: Հասկցողին շատ բարեւներ:

Այժմ թանգարանը կ'ընդգրկէ 626.3 ըմ տարածք, վերականգնած է յուշատան մասը, իսկ միւս երեք յարկաբաժինները կը զբաղեցնեն հիմնական ցուցադրութիւնը:

Երեք սրահներու մէջ ներկայացուած են բանաստեղծին կեանքն ու ստեղ-

ծագործութիւնը: Թանգարանը իր հիմնական առաքելութիւնը կատարելէ բացի՝ կը կազմակերպէ նաեւ ցուցահանդէսներ, գրական-երաժշտական երեկոներ, դասախօսութիւններ, թեմատիկ դասեր, համերգներ, հանդիպումներ, շնորհանդէսներ, փառատօներ, Չարենցեան ընթերցումներ եւ այլն:

Թանգարանը կը գտնուի Երեւանի Մաշտոցի պողոտայի թիւ 1



# Սփիւռքահայ Կեանք

## Անթիլիաս - Լիբանան

### «Ընկերային Լրատուամիջոցները Եւ Հայկական Ինքնութիւնը». Զրոյց-Քննարկում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կազմակերպութեամբ

Մեր ժողովուրդի զաւակներուն եւ յատկապէս երիտասարդ՝ ապագայ սերունդին հայեցի առողջ դաստիարակութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաջնահերթ առաքելութիւններէն մին կը հանդիսանայ: Ներկայ արհեստագիտական զարգացումները եւ մանաւանդ ընկերային լրատուամիջոցները, որոնք լայն չափով կ'օգտագործուին մեր երիտասարդ սերունդին կողմէ, ունին իրենց դրական ու ժխտական երեսները եւ պայման է անոնց ճշգրիտ գործածութեան մասին ծրագիրներ մշակել՝ յատկապէս ընդհանրական հարցերու գծով:



Այս մտահոգութենէ մեկնած, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Լատտեոլական բաժանմունքը, Հինգ-շաբթի, 29 Յունուար 2016-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, «Կիլիկիա» թանգարանի սրահէն ներս, կազմակերպած էր երիտասարդական գրոյց-քննարկում մը՝ «Ընկերային լրատուամիջոցները իրենց դրական ու ժխտական երեսներով եւ անոնց ազդեցութիւնը հայու ինքնութեան կազմաւորման վրայ» թեմայով: Հանդիսութեան բացումը կատարեց Ա.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, որ ընդգծեց, թէ եկեղեցին հրաւիրած է զիրենց համայնական մտահոգութեան մը շուրջ լսելու իրենց գաղափարներն ու առաջարկները: Ան յայտնեց, որ այս գրոյց քննարկումը պէտք է կեդրոնանայ մեր ինքնութիւնը եւ համայնական արժեքները դրսեւորելու եւ արհեստագիտական միջոցներու օգտագործմամբ զանոնք վառ պահելու եւ ծաղկեցնելու վրայ:

Այս անգամ 70 ընտրուած երիտասարդ հրաւիրեալները իրենց կարծիքները սկսան արտայայտել, անդրադառնալով ընկերային լրատուամիջոցներուն բարերար ու ժխտական ազդեցութեանը: Լայնօրէն քննարկուեցաւ Արեւմտահայերէնի գործածութիւնը՝ նկատի ունենալով, թէ լեզուն մեր հայկական ինքնութեան կոռուստներէն մին է: Ծինիչ քննարկումը տեսեց շուրջ երկու ժամ. ներկաները իրենց գոհունակութիւնը յայտնեցին այս նախաձեռնութեան համար, եւ առաջարկ ներկայացուցին ապագային աւելի սահմանափակ նիւթերու վրայ կեդրոնանալ ու խորքային քննարկումներ կատարել:

Աւարտին Նորին Սրբութիւնը իր ուրախութիւնը արտայայտեց կատարուած սրտբաց քննարկումին համար՝ ընդգծելով, թէ մեր ընկերութեան մէջ արհեստագիտութիւնը ներկայ եւ անխուսափելի երեւոյթ է, որուն դէմ պայքարիլը անհնար է՝ ժխտական մօտենալով ճիշդ չէ, սակայն զգուշաւոր ըլլալը պայման է: Ան եզրափակեց հետեւեալ կէտերը շեշտելով. Ա) Ընկերային լրատուամիջոցները եւ կամ այսպէս կոչուած «ֆէյսպուքեան մշակոյթ»ը գործիք մըն է, որուն ճիշդ կամ սխալ գործածութիւնը անհատէն կախեալ է. շեշտելով, թէ մենք հետամուտ պէտք է

ըլլանք օգտագործելու անոր դրական ու բարերար երեսները: Դաստիարակութիւնը՝ ընտանեկան ու դպրոցական մակարդակներու վրայ, նախապայման է ընկերային լրատուամիջոցներու առողջ գործածութեան առաջնորդելու: Բ) Գործածութեան նպատակը եւս կարելու հարց մըն է, որ մեզ կը կողմնորոշէ, թէ ինչու՞ համար եւ ի՞նչ նպատակով պէտք է օգտագործենք ընկերային լրատուամիջոցները: Դժբախտաբար անոնք շատ դիւրաւ մեզ կրնան մղել անպատասխանատու կեցածոյքներ որդեգրելու եւ ապատեղեկատուութիւն կատարելու, երեւոյթ մը, որմէ պէտք է զգուշանանք, թէ՛ անհատական եւ թէ՛ ընկերային մակարդակներու վրայ: Գ) Իբր փոքր ժողովուրդ մենք անաւտոմատ հակազդելու քաղաքականութիւն մը որդեգրած ենք: Այսօր Նոյն ձեւով չենք կրնար շարունակել, ուրիշէն տարբեր ըլլալը չէ՛, որ մեր ինքնութիւնը կը բնորոշէ, այլ մեր արժեքներն են, որոնք կը կերտեն մեր հաւաքական ինքնութիւնը: Նկատի պէտք է ունենալ, որ ներկայ ընկերային լրատուամիջոցները կը փորձեն մէկ ինքնութեան շուրջ համախմբել մտքերը ընկերութիւնը, արհեստագիտութեան պարտադրած այս կոր պայմաններուն տակ պարտինք կառչիլ մեր արժեքներուն՝ առանց մեկուսացնելու մենք զմեզ եւ հեռանալու ուրիշներէն:

## Փարիզ - Ֆրանսա

### Օլանտ Հայոց Ցեղասպանութեան Ժխտումը Զրեականացող Օրէնքի Պատրաստումը Վստահած Է Ժան Փոլ Կոսթային



Փարիզի l'Hotel du Collectionneur-ի մէջ Յունուար 28-ի երեկոյեան տեղի ունեցած է՝ Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի ամենամեայ ընթրիքը:

Իր խօսքին մէջ Օլանտ յայտարարած է, որ վերսկսած են Ֆրանսայի մէջ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրեականացող օրէնքի պատրաստման շուրջ քննարկումները՝ նշելով, որ անոր պատրաստումը վստահած է Մարտի իրաւունքներու եւրոպական դատարանի նախկին նախագահ Ժան Փոլ Կոսթային:

«Յորդորած են Ժան Փոլ Կոսթային, որ մեր լաւագոյն իրաւաբաններէն մէկն է, որպէսզի մեր օրէնսդրութեան մէջ գտնէ որեւէ ծանրակշիռ ճանապարհ, որ ապփոփոխելու կը պաշտպանէ Հայոց Ցեղասպանութեան յիշողութիւնը», յայտարարած է Ֆրանսուա Օլանտ, ինչպէս կը հաղորդէ «Արմենփրես»ը՝ վկայակոչելով Էլիզեթ պալատի պաշտօնական կայքը, որուն հետեւած են ներկաներուն ծափողոյնները:

Ֆրանսայի նախագահը աւելցուցած է, որ Ժան Փոլ Կոսթային կարճ ժամանակի մէջ պիտի փորձէ գտնել այն բոլոր

երաշխիքները, որ ակէ ետք օրէնքի հետ կապուած իրաւական որեւէ տարակարծութիւն չըլլայ:

Օլանտ դիմելով ներկաներուն նշած է, որ գիտէ, թէ ինչպիսի դժգոհութիւններ յառաջացած են 2012-ին ներկայացուած օրէնքի ընդունման շուրջ, որ անոր խօսքով հնարաւոր է՝ ներկայացուած էր հապճեալ, որուն հետեւանքով այլ յառաջացած էին սահմանադրականութեան հետ կապուած խնդիրներ: Միաժամանակ Օլանտ կարելու համարած է նոր օրէնքի անվերապահ սահմանադրականութիւնը, քանի որ եթէ անկիւ բողոքարկեն ՄԻԵԴ-ի մէջ, «ապա ատիկա կ'ըլլայ սարսփելի պարտութիւն Ֆրանսայի համար եւ Հայ Դատի ուրաջում»: Ֆրանսայի նախագահը նաեւ վստահեցուցած է, որ Ցեղասպանութեան ժխտումը քրեականացող օրէնքի ընդունման իր խոստումը՝ որեւէ կապ չունի ըստօրինակներուն հետ:

«Ինդիլը հաշտեցնել է: Հայաստանը եւ Թուրքիան միշտ պէտք է իմանան, որ Ֆրանսան իրենց կողքին է՝ օգնելու անոնց գտնել երկխօսութիւն», ըսած է Օլանտ:

Ֆրանսահայ կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի նախագահ Մուրադ Փափագեան, արծազանգելով նախագահ Օլանտի խօսքին նշած է, որ կը հպարտանան, քանի որ ան 2015-ին եղած է Հայաստանի կողքին:

«2016 թուականին Ֆրանսայի հայկական ծագումով 500 հազար քաղաքացիներ պիտի հետեւին ձեզի՝ իրենց ամենամուտիւրական ցանկութիւնը իրականացնելու գործողութիւններու ճանապարհին», ըսած է Փափագեան, որ իր ելոյթը հրապարակած է «Ֆէյսպուք»ի մէջ:

# Սուրիահայ Օրագիր

## Սուրիոյ Հոգեւոր Առաջնորդներու Հանդիպում Անթիլիասի Մայրավանքէն Ներս



Հինգշաբթի, 28 Յունուար 2016-ին, Անթիլիասի Մայրավանքէն ներս Սուրիոյ հայութեան վերականգնումի գծով տեղի ունեցած խորհրդակցութեան որպէս շարունակութիւն, Ուրբաթ, 29 Յունուար 2016-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ տեղի ունեցաւ հոգեւոր առաջնորդներու հանդիպումը, մասնակցութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի, Հայէպի Թեմի Հայ Կաթողիկէ Առաջնորդ Գերապայժառ Պետրոս Արք. Սրեթեանի եւ Սուրիոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Համայնքապետ Վերպ. Յարութիւն Սելիմեանի:

աշխատելու յանձնառութիւնը: Նորին Սրբութիւնը նաեւ իր գնահատանքը յայտնեց Սուրիոյ հայութեան իրենց նիւթական աջակցութիւնը կատարած բոլոր կազմակերպութիւններուն ու հայորդիներուն: Վեհափառ Հայրապետը շեշտեց Սուրիոյ հայութիւնը վերականգնումի առաջնորդող Նոր ծրագիրներու մշակման անհրաժեշտութիւնը:

Վեհափառ Հայրապետը ընդհանուր գծերով տեղեկ պահեց հոգեւոր առաջնորդները օր մը առաջ տեղի ունեցած խորհրդակցական հանդիպման քննարկումներուն մասին: Ան ողջունեց սուրիական տագնապի տարիներուն Սուրիոյ հայութեան ցուցաբերած միասնական ոգին եւ միասին խորհրդակցելու ու

Հոգեւոր առաջնորդները իրենց շնորհակալութիւնը յայտնեցին Արամ Ա. Կաթողիկոսին, որ անցնող տարիներու ընթացքին միշտ զօրակից դարձած է Սուրիոյ հայութեան՝ բոլոր շրջաններէն ներս, միաժամանակ շնորհակալութիւնը յայտնեցին օժանդակ հանդիսացած բոլոր հայորդիներուն: Ապա անոնք իրենց տեսակէտները պարզեցին վերականգնումի աշխատանքներուն եւ ծրագիրներուն գծով:

Վերջապէս հոգեւոր առաջնորդները ճաշի հիւրը եղան Վեհափառ Հայրապետին:

# Հայրենի Տեսութիւն

## Արցախի Ազգային Վիճակախաղի Իրականացման Ընտրիչ 201 Կիներ Աշխատանք Ունին



Արցախի ազգային վիճակախաղի Երեսնի գրասենեակը Յունուար 27-ին, Երեսնի պետական համալսարանի (ԵԴՀ) մէջ կազմակերպած էր վիճակախաղի շահումներու յանձնման արարողութիւն: Ազգային վիճակախաղի 2015թ. Արդիւններով՝ Հայաստանի մէջ խաղարկութեան մասնակցած է 50 հազար տոմս, որմէ երկու հարիւր գտած են իրենց շահողները:

արդիւնները ուղղէնք աշխատանքային տեղերու ստեղծման, ան ալ կանանց համար», ըսաւ փոխվարչապետը ընդգծելով, որ Արցախի ազգային վիճակախաղի շահումներու յանձնման արարողութիւն: Ազգային վիճակախաղի 2015թ. Արդիւններով՝ Հայաստանի մէջ խաղարկութեան մասնակցած է 50 հազար տոմս, որմէ երկու հարիւր գտած են իրենց շահողները:

«Արմենփրես»ի հաղորդմամբ լրագրողներուն հետ գրոյցի ընթացքին, այս մասին ըսաւ Արցախի ազգային վիճակախաղի Երեսնի գրասենեակի տնօրէն Ազատուի Սիմոնեան: «Արդէն Յոյ օրն է, որ Երեսնի մէջ կը կատարուի շահումներու բաշխումը եւ ան կը կրէ շարունակական բնոյթ: Զանի որ ԵԴՀ-ն մեր մշտական գործընկերներն է եւ վիճակախաղի մեկնարկէն մինչեւ օրս մեզի աջակցած է, այդ պատճառով ալ այստեղ կը կատարուի վիճակախաղի մրցանակներու յանձնման արարողութիւնը: ԵԴՀ-ն գնելով տոմսեր Նուրիւրաճ է ուսանողներուն, անոնցմէ 10-ը վիճակախաղի մրցանակներով շահած են մրցանակներ», ըսաւ Սիմոնեան աւելցնելով, որ շահումային ֆոնտին մէջ ներառուած են «Արտարդուած է Արցախի մէջ» տարբերակիչը կրող շահումներ՝ արցախեան անաւտոմատ գորգեր, թուփ օղի տակաշիկով եւ յուշանուէրներ:

Վիճակախաղի իրականացման յաջորդ նպատակը ըստ փոխվարչապետին՝ ազգային վիճակախաղի իրականացման ռազմավարական ծրագիրներու իրագործումն է: Այս տարիներուն ընթացքին թիւ մէկ նպատակը վերաբնակեցման ծրագիրն է: Ծրագրի հիմքին մէջ իշխանաձոր համայնքի վերաբնակեցումն է: ԵԴՀ տնօրէն Արամ Սիմոնեան ըսաւ, որ ԵԴՀ-ի մէջ վիճակախաղի մրցանակներու յանձնման արարողութեան իրականացման համար քանի մը ուղղութիւններով աշխատանքներ տարուած են: Անոնցմէ առաջինը ԵԴՀ ուսանողներուն եւ աշխատակիցներուն Արցախ այցելելու հնարաւորութիւնն է:

ԼԴՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկեան նշեց, որ վիճակախաղի թողարկման առաջին շրջանին կարծիք կար, որ Հայաստանի եւ Արցախի մէջ պետական վիճակախաղի ընկալման ինդիլը կը յառաջանայ, բայց այսօր մեր հայրենի կը կատարուի վիճակախաղի մրցանակներու յանձնման արարողութիւնը: ԵԴՀ-ն գնելով տոմսեր Նուրիւրաճ է ուսանողներուն, անոնցմէ 10-ը վիճակախաղի մրցանակներով շահած են մրցանակներ», ըսաւ Սիմոնեան աւելցնելով, որ շահումային ֆոնտին մէջ ներառուած են «Արտարդուած է Արցախի մէջ» տարբերակիչը կրող շահումներ՝ արցախեան անաւտոմատ գորգեր, թուփ օղի տակաշիկով եւ յուշանուէրներ:

«Մեր աշխատակիցները առանձին աշխատանքներ կը տանին նաեւ իշխանաձոր համայնքին մէջ՝ դպրոցներու եւ երիտասարդութեան կետ, ճիշդ է փոքր բայց իմ կարծիքով կարելու ծրագիրներ: Յաջորդ հանգամանքը այն է, որ ԵԴՀ-ն պարտաւստակամ է նաեւ իր ուժերու ներած չափով ներդրումներ ընել՝ այլ ծրագիրներու զարգացման ու նոր աշխատանքային տեղերու ստեղծման համար: Մենք մեր գործով կը գիտակցինք, որ օգուտ կը բերենք ընդհանուր գործին», նշեց տնօրէնը:

Արցախի ազգային վիճակախաղը հիմնուած է 2014թ. ԼԴՀ ռազմավարութեան կողմէ: Վիճակախաղի նպատակն է կանանց համար աշխատանքային տեղերու ստեղծումը, որպէսզի վերականգնուի Սուրիոյ հայութեան թիւը: Արցախի վիճակախաղի կայացման առաջին հիմնական նպատակը, որ մենք որդեգրած էինք այն էր, որ վիճակախաղի





# Մարզական



## Քուֆա ՏԷՆԻՍ Բառորդ Աւարտ. Գանգրուանի Դարձ Սեւիլիան Եւ Վալենսիան Զասան Կիսաւարտական



Սպանիոյ բաժակի մրցաշարի քառորդ աւարտական հանգրուանի երկրորդ օրուան մրցումներուն, «Սեւիլիան» իր դաշտէն դուրս դարձեալ յաղթեց երկրորդ դասակարգի «Միրանտես»-ին եւ ապահիլեց կիսաւարտական հանգրուանի տոմսը: «Վալենսիան» աւելի դժուար գործ ունէր՝ ան իր դաշտին վրայ հաւասարած էր «Լաս Փալմաս»-ին հետ եւ դարձի մրցումին անպայման պէտք է յաղթեր: «Չոլչիկներ»ը յաջողեցան եւ հասան վերջին չորսի հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները:

- Միրանտես (Բ. Դաս.) - Սեւիլիա 0-3, երթ. 0-2
- Կոլեր. Իպորրա տուգ. 9, Խուսն Մուսիոզ 70, Զոքե 90+2,
- Լաս Փալմաս - Վալենսիա 0-1, երթ. 1-1
- Կոլ. Ռոտրիկո 20, փոխ. Անտրե Կոմեշ,
- Կիսաւարտական հանգրուանին պիտի մրցին Պարսելոնա - Վալենսիա եւ Սեւիլիա - Չելթա ՏԷ Վիլո խումբերը:

### Յոլանտայի Ախոյեանութիւն

**Ֆեյենուրտը Կրեցերորդը Պարտութիւնը**  
 Յոլանտայի ֆուլբոլի ախոյեանութեան 20-րդ հանգրուանի երրորդ օրուան մրցումներուն Ռոթթերտամի «Ֆեյենուրտ»ը իր դաշտին վրայ կրեց իր երրորդ անընդմեջ պարտութիւնը, զիջելով միջակ դիրք գրաւող «Յիրընվին»-ին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ռոտտա ճէյ Սի Զերքրատէ - Ռոթթերտամ 1-0
- Ֆեյենուրտ Ռոթթերտամ - Յիրընվին 1-2
- Կոլեր. Ա. Աշահպար 71 - Յ. Վիրմեն 39, ճ. Վան Տեն Պըրկ 84, Դասաւորում.
- 1-Այաքս 48 կէտ 47-11, 2-Փի Էս Վի 47 կէտ 51-22, 3-Ֆեյենուրտ 36 կէտ 40-26,
- Ռմբարկուներ.
- 1-Լ. Տէ Ենկ (Փի Էս Վի) 15 կոլ, 2-Տ. Զոյթ (Ֆեյենուրտ) 13 կոլ, 3-Զ. Սալթոս (Էս Ի Սի) 13 կոլ,

### Շաբաթավերջի Մրցումներու Յայտագիրը

Ստորեւ տեսնել այսօրուան մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

### Կիրակի 31 Յունուար 2016

- ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ ԶԱՆՈՐԴ ԱՄԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 13:30 Սաֆա (1) - Անսար (6), Պուրճ Զամուտի քաղաք. մարզ.  
 Ժամը 15:10 Ալ Կիլտ (2) - Շապպա Ալ Սահէլ (3), Սայտայի քաղաք. մարզ.  
**ԼԻԲԱՆԱՆԻ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅՅԵԱՆ. 3-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 14:15 Ալ Սալամ Ալ Պասաթին - ՅԱԼԱ Պուրճ Զամուտ, Զֆաշիմայի մարզ.  
**ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԵՐՈՒ ԱՆՈՅՅԵԱՆ. 11-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 12:00 ՅԱՍ - Անսար, Աթթիբիթի մարզ.  
**ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՏԵՐՆԵՐՈՒ ԱՆՈՅՅԵԱՆ. 11-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 12:00 Թրիփոլի - ՅԱՍ, Թրիփոլի Ուիմպ. մարզ.  
**ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 13:00 Սեւիլիա (7) - Լեանթ (20)  
 Ժամը 17:00 Վալենսիա (11) - Սփորթինկ Խիխոն (19)  
 Ժամը 19:15 Լաս Փալմաս (18) - Չելթա ՏԷ Վիլո (5)  
 Ժամը 21:30 Ռեալ Սատրիս (3) - Եսիանիոլ (13)  
**ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 16:30 Վոլֆսպուրկ (7) - Բեյլ (9)  
 Ժամը 18:30 Պայըրն Միլսիխ (1) - Յոֆնիսայ (17)  
**ԱՆԳԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 15:30 Զարլայլ Եուսայթու (Դ. Դաս.) - Էվըրթըն (12)  
 Ժամը 18:00 Միլըն Բեյնզ Տոնզ (Բ. Դաս.) - Չելսի (13)  
**ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 13:30 Բիելո Վերոնա (10) - Եուվենթիա (2)  
 Ժամը 16:00 Նափոլի (1) - Եմիլիո (8)  
 Ժամը 16:00 Ճենովա (16) - Ֆիորենթինա (3)  
 Ժամը 21:45 Միլան (6) - Ինթեր Միլան (4)  
**ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 15:00 Զայն (7) - Նիս (3)  
 Ժամը 18:00 Պոտոս (10) - Ռէն (4)  
 Ժամը 22:00 Սելթա Եթիէն (6) - Փարի ՍԷՆ Տերմեն (1)  
**ՓՈՐՏՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 18:00 Արուբա (9) - Փաշու ՏԷ Ֆերերա (5)  
 Ժամը 19:00 Պոպուսա (17) - Սփորթինկ Պրակա (4)  
 Ժամը 21:15 Մորէյրեստ (14) - Պենֆիլդ (2)

**ՀՈԼԱՆԴԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 13:30 Ռոտտա ճէյ Սի Զերքրատէ (13) - Այաքս Ամսթերտամ (1)  
 Ժամը 15:30 Ֆեյենուրտ Ռոթթերտամ (3) - Էյ Տի Օ Տեն Զասկ (12)  
**ՍՎԻՍԻՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 17:00 Ռոս Զաուսթի (4) - Սելթիթ (1)  
**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՎԱՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ**  
 Ժամը 22:45 ԱՄՆ - Իսլանտա

**ՊԱՍԵՏԹՊՈՒԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԳՐՈՑ ԱՆՈՅՅԵԱՆ. 7-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 17:00 Պիպլու (7) - Թատամն Զուք (4), Միշէլ Սլէյման մարզ.  
**ԹԵՆԻՍԻ ԱՄՏՐԱՆԻՈՅ ԲԱՑ ՄՐՑԱԵԱՐԳԻ ԱՄԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄ**  
 Ժամը 09:30-Էս սկսեալ eurosport 1 կայանէ:  
**ՋՆԵՐԱՅԻՆ ՄԱՐԶԱՅԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՒՆ**  
 Ժամը 12:45-Էս սկսեալ eurosport 1 կայանէ:  
 Ժամը 09:30-Էս սկսեալ eurosport 2 կայանէ:  
**ԳԵՂԱՍՏՅԵԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՒՆ**  
 Ժամը 14:30-Էս սկսեալ eurosport 2 կայանէ:

### Պասքէթպոլ Լիբանանի Աղջիկներու Ախոյեանութիւն

## Ռիատին Տարաւ Երկրորդ Յաղթանակը

Լիբանանի պասքէթպոլի աղջիկներու ախոյեանութեան 2-րդ հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ռիատի Պէյրութ - Շապպա Ժիսի 101-29
- Թատամն Զուք - Յուսի 39-35
- Դասաւորումը երկու հանգրուան ետք.
- 1-Ռիատի Պէյրութ 2 մրց. 2 յաղթ. 0 պարտ.
- 2-ՅԱԼԱ Պէյրութ 2, 2, 0
- 3-Ալ Շապպա Ալ Արապի 2, 2, 0
- 4-Անդրանիկ Պէյրութ 2, 1, 1



### Թենիս Աւտարալիոյ Բաց Մրցաշարը

## Ճոքովիչը Եւ Ուիլիըմզը Յաւակնորդներ



Այս տարուան Մեծ Սաղաւարտի առաջին մրցաշարի կիսաւարտական հանգրուանի տղոց մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

թիւ 1 դասուած սերպ Նովաք Ճոքովիչը յաղթեց թիւ 3 դասուած գուլիցերիացի Ռոժէ Ֆետերերին 6-1, 6-2, 3-6, 6-3, հաշիւով, իսկ թիւ 2 դասուած բրիտանացի Էստի Մըրլըյ յաղթեց մրցաշարի անակնալ թիւ 13 դասուած քանադացի Միլոշ Ռաուիչին 4-6, 7-5, 6-7 թայ պրէյք 4-7, 6-4, 6-2 հաշիւով: Այս աւարտական մրցումը պիտի ըլլայ Ճոքովիչին վեցերորդը:

Իսկ կիներու կիսաւարտական հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

թիւ 1 դասուած ամերիկացի Սերենա Ուիլիըմզը յաղթեց թիւ 4 դասուած լեի Ալիսիէա Ռատովանսքային 6-0, 6-4 հաշիւով, իսկ թիւ 7 դասուած Անժէլիք Զերպեր յաղթեց մրցաշարի անակնալ բրիտանացի Եոհաննա Զոնսթային 7-5, 6-2 հաշիւով:

### Գեղասահք Եւրոպայի Ախոյեանութիւն Գալուստեանը՝ 16-րդ Դիրքի Վրայ



Սլովակիոյ մայրաքաղաք Պրաթիսլավա քաղաքին մէջ սկսած Եւրոպայի գեղասահքի ախոյեանութեան մրցումներուն հայաստանի ներկայացուցիչները արձանագրեցին հետեւեալ արդիւնքները.

- Կիներու մրցումին կարճ, պարտադիր ծրագիրէն ետք Անասթազիա

Գալուստեանը շահեցաւ 48.93 կէտ եւ 36 մասնակիցներու մէջ գրաւեց 16-րդ դիրքը: Կարճ ծրագիրին մէջ ամենաշատ կէտ շահեցաւ ռուս Եվկենիա Մետովտեանս՝ 72.55 կէտ:

- Տղոց մրցումին կարճ, պարտադիր ծրագիրէն ետք Սլավիկ Զայրապետեանը շահեցաւ 46.71 կէտ եւ 35 մասնակիցներու մէջ գրաւեց 31-րդ դիրքը: Կարճ ծրագիրին մէջ ամենաշատ կէտ շահեցաւ սպանացի Խալիթ Ֆերնանտէսը՝ 102.54 կէտ:
- Չոյգերու մրցումին կարճ, պարտադիր ծրագիրէն ետք Թիւս Կարապետեան-Միմոն Սենեկալ գոյգը շահեցաւ 50.17 կէտ եւ գրաւեց 20-րդ դիրքը: Կարճ ծրագիրին մէջ ամենաշատ կէտ շահեցաւ իտալացի Աննա Զապելիսի-Լուքա Լանթօ գոյգը՝ 72.31 կէտ:

## ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐ-ԿՈՇՆԱԳԻՐ

Մեծայարգ

Պրն. Իշխան Ճինպաշեան

Յարգելի պարոն,

Լիբանանի Հայոց Թեմի Դատաստանական Խորհուրդոյ, իր Ուրբաթ 2 Հոկտեմբեր 2015 թուականին կայացուած նիստին, որուն ներկայ չգտնուեցաք, զբաղեցաւ ձեր ընտանեկան հարցով:

Մոյն ազդարարագրով ձեզ կը հրաւիրենք Դատաստանական Խորհուրդի նիստին, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ 5 Փետրուար 2016-ի կէտօրէ ետք ժամը 1:30ին, Պուրճ Զամուտի Ազգ. Առաջնորդարանին մէջ, պաշտպանելու համար ձեր դատը անձամբ կամ փոխարինող անձի միջոցաւ:

Չներկայանալու պարագային, ձեր բացակայութիւնը ներկայութեան համագոր պիտի նկատուի եւ արձակուի համապատասխան վճիռ:

**ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**  
**ԼԻԲԱՆԱՆԻ ՀՄՅՈՑ**

## ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄԱՐԱԾԻ ԱՂԵՏԻՆ

Միտելի հայրենակից,

Լիբանանի Մարաշի Զայրենակցական Միութիւնը, պիտի ոգեկոչէ Մարաշի աղետին 96-րդ տարեկիցը:

Նոր Մարաշի Զայ երեք յարանուանութեանց եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենան Ս. Պատարագ, Պաշտամունք եւ հոգե-հանգստեան պաշտօններ, Կիրակի 31 Յունուար 2016-ին, Մարաշի հին եւ նոր նկեցեալ հայրենակիցներուն հոգիներուն համար:

Կը հրաւիրենք Ձեզ բոլոր, ներկայ գտնուելու վերոյիշեալ եկեղեցական արարողութիւններուն, յարգելու համար խնկելի յիշատակը մեր նկեցեալներուն:

Ս. Զառասնից Մանկանց Եկեղեցի	Յաւարտ Ս. Պատարագ
Ս. Փրկիչ Եկեղեցի	Ժամը 10:00
Զայ Աւետարանական Եկեղեցի	Ժամը 10:00

Յաւարտ եկեղեցական արարողութեանց, բոլոր հայրենակիցները հրաւիրուած են Միութեանս նորակառոյց սրահը, հոգեսուրճ առնելու եւ յարգելու մեր նահատակներուն յիշատակը:

Հովանաւորութեամբ՝  
 Վահան Թեքեան Վարժարանի  
 Հոգաբարձութեան

Կազմակերպութեամբ՝  
 Վարժարանի Սանուց Միութեան

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՐԵԿՈՑ

- \* Հանելի Մթնոլորտ
- \* Karaoke
- \* Bingo

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 27 Փետրուար 2016, երեկոյան ժամը 8:30-էն սկսեալ, Վահան Թեքեան Վարժարանի «Յակոր Պարսամբան» սրահին մէջ:

## ԳՐԱԴՈՒՄԾ ՕՐ

ԲԱՅԼ-Ի

Զայ Տարեկներու Տան Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ

Երեքշաբթի, 3 Մայիս 2016

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Գետեա-բար՝ թերթին մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամբէ անկախ սպորտի վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: